

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2020-2021 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

27 մայիսի 2021թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 24 անդամներից 21–ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սաղյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի ամբիոնների դոցենտների և պրոֆեսորի թափուր պաշտոնների տեղակալման մրցութային ընտրության անցկացում:
2. ԵՊՀ Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ, ք.գ.դ. Ռուբեն Հովհաննեսյանի կողմից ներկայացված Ապացուցողական բժշկության տերմինների բացատրական բառարանի արտաքին գրախոս նշանակելու հարցը:
3. Ընթացիկ հարցեր:
 - 3.1. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի ասիստենտ Վիրաբ Կիրակոսյանի կողմից ներկայացված «Լուծելիության թեստը, որպես պերորալ ճանապարհով ընդունվող կարծր դեղաձևերի որակի հսկման ցուցանիշ» վերնագրով ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորման հարցը:
 - 3.2. Ֆարմացիայի ինստիտուտի ասպիրանտների և հայցորդների տարեկան ատեստավորման հարցը:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

Լսեցին՝

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի ամբիոնների դոցենտների և պրոֆեսորի թափուր պաշտոնների տեղակալման մրցութային ընտրության անցկացման հարցը:

Ելույթ ունեցավ՝

Գիտական խորհրդի նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սաղյանը, ով նիստին ներկա գտնվողներին ներկայացրեց օրակարգը և նշեց, որ եթե օրակարգի հետ կապված առարկություններ չկան, ապա սկսեն հիմնական հարցերի քննարկումը:

Ա. Սաղյանը ձայնը տվեց գիտքարտուղար Ա. Դադայանին՝ մրցույթին մասնակցող թեկնածուների անձնական գործերը ներկայացնելու համար: Նա նախ ներկայացրեց դոցենտների թափուր պաշտոնների համար դիմած հավակնորդների գործերը: Ա. Դադայանը տեղեկացրեց, որ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի դոցենտի 2 թափուր տեղերի համար դիմել են ք.գ.թ. Մարինա Շեյրանյանը և ք.գ.թ. Սվետլանա Ափոյանը, իսկ Ֆարմքիմիայի և ֆարմակագնոգիայի ամբիոնի դոցենտների 3 թափուր տեղերի համար՝ ք.գ.թ. Սամվել Վարդապետյանը, ք.գ.թ. Կիմա Պետրոսյանը, ք.գ.թ. Ժաննա Սարգսյանը: Նրանց կողմից բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են ԵՊՀ Որակավորման մանդատային հանձնաժողովին, որը տվել է իր դրական եզրակացությունը: Մանդատային հանձնաժողովը գտնում է, որ Մ. Շեյրանյանի, Ս. Ափոյանի, Ս. Վարդապետյանի, Կ. Պետրոսյանի ու Ժաննա Սարգսյանի տվյալները բավարարում են հայտարարված մրցույթի պայմաններին և պաշտոնի հավակնորդներին առաջադրվող պահանջներին:

Գիտքարտուղար Ա. Դադայանը նշեց, որ համաձայն ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգի՝ թեկնածությունների քննարկումն իրականացվել է ամբիոնում, ինչպես նաև մրցութային հանձնաժողովում:

Ֆարմացիայի ինստիտուտի Ֆամտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի, Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնները և մրցութային հանձնաժողովը երաշխավորել են նրանց՝ հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Մրցույթի մասնակիցների մասին կարծիք հայտնեցին ք.գ.թ., դոցենտ Անահիտ Հովհաննիսյանը, ք.գ.թ., դոցենտ Հայարփի Միմոնյանը, ուսանողներ՝ Էմմա Մարկոսյանը, Ռուբեն Իսրայելյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ մրցույթի մասնակիցները փորձառու և մրցունակ դասախոսներ են և արժանի են ընտրվելու համապատասխան պաշտոններում:

Նիստի նախագահ Ա. Սադյանը տեղեկացրեց ներկաներին, որ հարգելի պատճառներով չի կարող շարունակել նիստը, ուստի առաջարկեց ուսումնական հարցերի գծով փոխտնօրեն Ս. Վարդապետյանին շարունակել նիստի անխափան ընթացքը: Գիտքարտուղար Ա. Դադայանն առաջարկեց նախ անցկացնել դոցենտների թափուր պաշտոնների տեղակալման մրցութային ընտրությունը, ապա՝ պրոֆեսորին: Նիստին ներկա գտնվողները համաձայնեցին առաջարկին, քանի որ մրցույթի մասնակիցների թիվը մեծ էր:

Բաց քվեարկությամբ գիտական խորհուրդը (միաձայն) որոշեց մրցույթի մասնակիցների անունները մտցնել փակ գաղտնի քվեարկության քվեաթերթի մեջ:

Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար որոշվեց ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով.

Նախագահ՝ Ա. Ֆ. Մկրտչյան

Անդամներ՝ Ս.Ղ. Պետրոսյան

Ա.Ա. Սարգսյան:

Ընտրություններից հետո Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի անդամները (24-անդամներից ներկա էին 20-ը) լսեցին հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունն, ըստ որի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել են խորհրդի 20 անդամներ:

Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի դոցենտի պաշտոնները զբաղեցնելու համար քվեարկության արդյունքներն են.

1. Մարինա Արտաշի Շեյրանյան- կողմ են քվեարկել գիտխորհրդի 20 անդամ, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթ՝ 0:

2. Սվետլանա Հակոբի Ափոյան - կողմ են քվեարկել գիտխորհրդի 20 անդամ, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթ՝ 0:

Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի դոցենտի պաշտոնները զբաղեցնելու համար քվեարկության արդյունքներն են.

3. Սամվել Մարտու Վարդապետյան - կողմ են քվեարկել գիտխորհրդի 20 անդամ, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթ՝ 0:

4. Կիմա Հարությունի Պետրոսյան - կողմ են քվեարկել գիտխորհրդի 20 անդամ, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթ՝ 0:

5. Ժաննա Վլադիմիրի Սարգսյան - կողմ են քվեարկել գիտխորհրդի 20 անդամ, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթ՝ 0:

Որոշեցին՝ Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ որոշեց հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը և.

1.1. Մարինա Շեյրանյանին ու Սվետլանա Ափոյանին ընտրված համարել Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի դոցենտների պաշտոններում:

1.2. Սամվել Վարդապետյանին, Կիմա Պետրոսյանին ու Ժաննա Սարգսյանին ընտրված համարել Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի դոցենտների պաշտոններում:

Դոցենտների մրցույթների արդյունքներն ամփոփելուց հետո ֆարմացիայի ինստիտուտի ուսումնական հարցերի գծով փոխտնօրեն Ս. վարդապետյանն առաջարկեց անցնել պրոֆեսորի թափուր տեղի համար մրցույթի անցկացմանը:

Սամվել Վարդապետյանը ներկաներին հաղորդեց, որ Կենսաբժշկագիտության ամբիոնի պրոֆեսորի թափուր տեղի համար դիմել է կ.գ.դ. Սուսաննա Բադալյանը, ուստի վերջինիս անձնական գործը ներկայացնելու համար ձայնը տվեց Ա. Դադայանին:

Ա. Դադայանը ներկաներին հաղորդեց, որ Սուսաննա Բադալյանի կողմից ԵՊՀ Որակավորման մանդատային հանձնաժողովին են ներկայացվել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և հանձնաժողովը գտել է, որ վերջինիս տվյալները բավարարում են հայտարարված մրցույթի պայմաններին ու պաշտոնի հավակնորդին առաջադրվող պահանջներին:

Ա. Դադայանը նշեց, որ համաձայն ԵՊՀ պրոֆեսորադասիտուսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգի՝ թեկնածության քննարկումն իրականացվել է ամբիոնում, որը սակայն, չի երաշխավորել Սուսաննա Բադայանի մասնակցությունը՝ Կենսաբժշկագիտության ամբիոնի պրոֆեսորի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին (ամբիոնի նիստի արձանագրությունից քաղվածքը կցվում է): Հարցը քննարկվել է նաև մրցութային հանձնաժողովի նիստում:

Մրցութային հանձնաժողովը երաշխավորել է Սուսաննա Բադայանի մասնակցությունը մրցույթին, չնայած որ ամբիոնը չի երաշխավորել նրա մասնակցությունը՝ ամբիոնում ուսումնական ծանրաբեռնվածության նվազման պատճառով:

Ելույթ ունեցավ՝ Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Ռուբեն Հովհաննեսյանը, ով գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց, որ Սուսաննա Բադայանն ամբիոնում աշխատում է 2017թ. -ից և հենց առաջին օրվանից հակադրվել է ամբիոնի ընդհանուր կարգ ու կանոնին, մասնավորապես.

- հրաժարվել է մասնակցել յուրաքանչյուր շաբաթ ներամբիոնային հարցերի շուրջ կազմակերպվող ընդհանուր քննարկումներին,
- աշխատանքի է ներկայացել գրեթե միայն այն օրերին, երբ ունեցել է դասախոսություններ և լաբորատոր դասեր,
- եղել են դեպքեր, երբ ամբիոնի գործավարը հրավիրել է ներկայանալ և ստորագրել հաստիքացուցակը, իսկ նա հրաժարվել է (զեկուցագրի պատճենը կցվում է),
- 2021թ. -ի փետրվարի 2-ին Ս. Բադայանը միայն նամակագրությամբ է տեղեկացրել այն մասին, որ հենց նույն օրը կայանալիք գիտխորհրդի նիստին քննարկման է ներկայացնելու թեմատիկ ֆինանսավորման հայտ՝ առանց ամբիոնում քննարկելու (նամակի պատճենը կցվում է): Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ Ռուբեն Հովհաննեսյանը հավելեց նաև, որ Սուսաննա Բադայանի կողմից ղեկավարած ավարտական աշխատանքներում և մագիստրոսական թեզերում արդեն 3 տարի է արվում են եզրակացություններ այս կամ այն թվաբանական մեծությունների տարբերությունների մասին, հիմնվելով պարզ հանման վրա, ինչը սակայն

անթույլատրելի է, քանի որ նման հաշվարկների համար գոյություն ունի Ստյուդենտի t – չափանիշը: Ռ. Հովհաննեսյանը զարմանալի է համարում, որ կենսաբանական գիտությունների դոկտորը գաղափար չունի կենսավիճակագրության հիմնական կանոնների մասին (2020-2021 ուս. տարվա որոշ աշխատանքների համապատասխան էջերի պատճենները կցվում են :

Ելույթ ունեցավ նաև ուսումնական հարցերի գծով փոխսնօրեն Ս. Վարդապետյանը, ով տեղեկացրեց, որ 2017թ. -ին Ս. Բաղալյանին նկատողություն է հայտարարվել՝ ԵՊՀ ներքին կարգապահական կանոններին չհետևելու համար (հրամանի պատճենը կցվում է):

Նիստին ներկա գիտխորհրդի ուսանող անդամները որևէ դժգոհություն չհայտնեցին Ս. Բաղալյանի մասին:

Ելույթ ունեցավ նաև Սուսաննա Բաղալյանը, ով նշեց, որ համաձայն չէ Ռուբեն Հովհաննեսյանի հնչեցրած փաստարկների հետ և հերյուրանք որակեց դրանք:

Բաց քվեարկությամբ գիտական խորհուրդը (միաձայն) որոշեց մրցույթի մասնակից Սուսաննա Բաղալյանի անունը մտցնել պրոֆեսորի պաշտոնի փակ գաղտնի քվեարկության քվեաթերթի մեջ:

Ընտրություններից հետո Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի անդամները (24-անդամներից ներկա էին 20-ը) լսեցին հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունն, ըստ որի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել են խորհրդի 20 անդամներ:

Կենսաբժշկագիտության ամբիոնի պրոֆեսորի պաշտոնը զբաղեցնելու համար Ս.Ս. Բաղալյանին կողմ են քվեարկել գիտխորհրդի 6 անդամ, դեմ՝ 13, անվավեր քվեաթերթ՝ 1:

Որոշեցին՝ Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ որոշեց հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունն, ըստ որի Սուսաննա Բաղալյանը չի ընտրվել Կենսաբժշկագիտության ամբիոնի պրոֆեսորի պաշտոնում:

2. ԵՊՀ Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ, բ.գ.դ. Ռուբեն Հովհաննեսյանի կողմից ներկայացված Ապացուցողական բժշկության տերմինների բացատրական բառարանի արտաքին գրախոս նշանակելու հարցը:

Ելույթ ունեցավ՝ Ֆարմացիայի ինստիտուտի մեթոդական խորհրդի նախագահ Սաթենիկ Պետրոսյանը, ով նշեց, որ Ռ.Ա. Հովհաննեսյանի հեղինակած բառարանը քննարկվել է ամբիոնում և մեթոդական խորհրդի նիստում (կարծիքները դրական են):

Ներքին գրախոս Բ.Գ.Դ., պրոֆեսոր Է. Սեկոյանը բարձր է գնահատել աշխատանքը, և կարևորել դրա նշանակությունը ոլորտի մասնագետների համար:

Աշխատանքի վերաբերյալ կարծիք հայտնեց նաև Կ.Գ.Թ., դոցենտ Անահիտ Հովհաննիսյանը, ով կարևորեց հատկապես այն հանգամանքը, որ նման հայալեզու բառանները խիստ անհրաժեշտ են բժշկության և դեղագործության ոլորտի մասնագետների համար:

Ելույթ ունեցան՝ գիտխորհրդի անդամներ Ս. Վարդապետյանը, Է. Սեկոյանը, Ա. Հովհաննիսյանը, ովքեր առաջարկեցին շարունակել դրա տպագրության գործընթացը: Ելույթ ունեցողներն առաջարկեցին աշխատանքն արտաքին գրախոսման ուղարկել ՀՀ ԿԳՄՄՆ «Լեզվի կոմիտե» և ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Սուրեն Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ»:

Որոշեցին՝ Ռուբեն Անդրանիկի Հովհաննեսյանի հեղինակած բառարանն արտաքին գրախոսության ուղարկել ՀՀ ԿԳՄՄՆ «Լեզվի կոմիտե» և ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Սուրեն Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ»:

3. Ընթացիկ հարցեր:

3.1. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմաբիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի ասիստենտ Վիրաբ Կիրակոսյանի կողմից ներկայացված «Լուծելիության թեստը, որպես պերօրալ ճանապարհով ընդունվող կարծր դեղաձևերի որակի հսկման ցուցանիշ» վերնագրով ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորման հարցը:

Ելույթ ունեցավ՝ Ֆարմացիայի ինստիտուտի ուսումնական հարցերի գծով փոխսնօրեն Ս. Վարդապետյանը, ով նշեց, որ Վիրաբ Կիրակոսյանի կողմից ներկայացված աշխատանքը ենթարկվել է ինչպես ներամբիոնային, այնպես էլ՝ արտաքին գրախոսման Արփիմեդ դեղագործական ընկերություն: Արտաքին գրախոսները (Արփիմեդ դեղագործական ընկերության որակի հսկման բաժնի

աշխատակիցներ Գրիգորյանը, Թադևոսյանը, Սարգսյանը և Նալբանդյանը) կարևորել են ուսումնական ձեռնարկի անհրաժեշտությունը և ներկայացված առաջարկությունները հաշվի առնելուց հետո այն երաշխավորել տպագրության:

Որոշեցին՝ (միաձայն) հաշվի առնելով վերոհիշյալ աշխատանքի անհրաժեշտությունն ուսումնական գործընթացի համար՝ այն թույլատրել տպագրության (100 օրինակ տպաքանակով) համալսարանի միջոցների հաշվին:

3.2. Ֆարմացիայի ինստիտուտի ասպիրանտների և հայցորդների տարեկան ատեստավորման հարցը:

Ելույթ ունեցավ՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար Ա. Դադայանը, ով հաղորդեց, որ հարցը քննարկվել է համապատասխան ամբիոններում: Ֆարմաթեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնում քննարկվել է առկա անվճար ուսուցմամբ ասպիրանտ Անուշ Ոսկանյանի և հայցորդ Հովհաննես Վաչագանի Ղազարյանի, իսկ Ֆարմքիմիայի և Ֆարմակազնոգիայի ամբիոնում՝ հայցորդ Նաիրա Շաբոյանի ատեստավորման հարցը:

Հաշվի առնելով հայցորդների և ասպիրանտի կողմից կատարված ծավալուն աշխատանքները՝ ամբիոնները նրանց երաշխավորել են ատեստավորման:

Որոշեցին՝ (միաձայն) հաշվի առնելով Ֆարմաթեխնոլոգիայի և ՖԷԿ-ի, Ֆարմքիմիայի և ֆարմակազնոգիայի ամբիոնների կարծիքներ՝ ատեստավորել ասպիրանտ Անուշ Ոսկանյանին, հայցորդներ Նաիրա Շաբոյանին և Հովհաննես Ղազարյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝
տնօրենի պաշտոնակատար,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա. Սադյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա. Դադայան